

Կոտայքի մարզպետարանում գործող գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի 2014թ. մարտի 20-ին կայացած նիստի

Ս/թ մարտի 20-ին կայացավ Կոտայքի մարզպետարանում գործող գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նիստը՝

**Նախագահությամբ՝ Ա.Պետրոսյանի
քարտուղարությամբ՝ Ա.Գաբրիելյանի**

Մասնակցությամբ՝

- Ա.Ղազարյան** – ՀՀ կոտայքի մարզպետի տեղակալ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
- Ա.Պետրոսյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ
- Ա.Գաբրիելյան** – գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի քարտուղար, Հրազդանի քաղաքապետի օգնական
- Ա.Աղոյան** - գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Կոտայքի մարզային կենտրոնի ղեկավար
- Զ.Բուրուշյան** - գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ
- Մ.Պետրոսյան** - գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
- Ա.Մելքոնյան** - գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, «Հայ օգնության միություն» հասարակական կազմակերպության անդամ
- Զ.Ոպանյան** - գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, կանանց հանրապետական խորհրդի Հրազդանի մասնաճյուղի նախագահ
- Կ. Հարությունյան** - գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամ, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջին կարգի մասնագետ

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի անդամներից 8-ը, բացակայում էին 3-ը: Հրավիրյալի կարգավիճակով նիստին մասնակցում էին ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետներ՝ Ն. Խչոյանը, Հ. Հալաբյանը, Շ. Արտաշյան:

Օրակարգ

1. Տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային հավասարության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից սահմանված ամենամյա «Հավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության հայեցակարգի, մրցանակների շտրինման կարգի և մրցանակաբաշխության մասնակցության հայտերի ներկայացում, քննարկում և գնահատում

/գեկուցող՝ գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ Ա. Պետրոսյան /

2. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի կողմից ներկայացված «Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության ծրագրերի մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկում

/գեկուցող՝ գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Հրազդանի քաղաքապետի օգնական՝ Ա. Գաբրիելյան /

1-ին հարցի մասին գեկույցով հանդես եկավ հանձնաժողովի նախագահ Ա. Պետրոսյանը: Նա ներկայացրեց, որ համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014թ. մարտի 5-ի N 01/15/1107-14 հանձնարարականի շրջաբերական նամակ է ուղարկվել մարզի բոլոր համայնքների ղեկավարներին՝ տեղեկացնելով, որ անցկացվում է ՀՀ վարչապետի կողմից սահմանված «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխություն՝ տեղական ինքնակառավարման բնագավառում գենդերային հիմնահարցերի լուծմանն աջակցության և համայնքային մակարդակում որոշումների ընդունման հարցում կանանց դերի բարձրացման նպատակով: Մրցանակաբաշխության հայեցակարգը, մրցանակների շնորհման կարգը և մասնակցության հայտի ձևը ուղարկվել է համայնքի ղեկավարներին (07.03.2014թ.) միաժամանակ ըստ հայեցակարգի պահանջի մրցանակաբաշխությանը մասնակցության հայտը տեղադրվել է Kotayk.gov.am կայք էջի հայտարարությունների բաժնում:

Մրցանակաբաշխությանը մասնակցության հայտեր են ներկայացրել 6 քաղաքային (Հրազդան, Եղվարդ, Բյուրեղավան, Չարենցավան, Արոլյան, Ծաղկաձոր) և 7 գյուղական (Նոր Գեղի, Լեռնանիստ, Բջնի, Պտղնի, Վերին Պտղնի, Արզական, Ջովունի) համայնքներ:

Քարտուղարի և ԸԿԵԻՊ բաժնի գլխավոր մասնագետների կողմից, համաձայն 13 համայնքներից ուղարկված հայտերի պատրաստվել է տեղեկանք, որը ներկայացվում է հանձնաժողովի քննարկմանը:

Արտահայտվեցին հանձնաժողովի անդամներ՝ **Ա. Գաբրիելյանը** և **Ա. Աղոյանը**՝ նշելով, որ ըստ ներկայացված հայտերի՝ համայնքում իրականացվող գենդերային խնդիրների լուծման առումով ավելի ակտիվ են մարզի քաղաքային համայնքները: Ա. Գաբրիելյանն առաջարկեց տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել մարզի 3 քաղաքային և 2 գյուղական համայնքների հայտերի տվյալները:

Որոշեցին՝

1. «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությանը ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզի հետևյալ՝ Հրազդան, Եղվարդ, Բյուրեղավան քաղաքային և Նոր Գեղի, Լեռնանիստ գյուղական համայնքների հայտերը /Հայտի տվյալները տեղեկանքով կցվում է/:
2. Մարզի համայնքների ղեկավարների հետ անցկացվող առաջիկա տարածքային խորհրդակցության ժամանակ անդրադառնալ մրցանակաբաշխության կազմակերպման աշխատանքներին և արդյունքների ամփոփմանը:

Օրակարգի երկրորդ հարցը քննարկման ներկայացրեց հանձնաժողովի քարտուղար **Ա. Գաբրիելյանը**՝ նշեց, որ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի կողմից ներկայացված «Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության ծրագրերի մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման կարգը